ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/7573/02/25

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25.07.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ-ի, «Ճապարի» ՍՊԸ-ի, «Ծանթ-Սեյրան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվորներ) ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին թիվ 2 արձանագրությունը (որոշումը)՝ 6.1 և 6.2 կետերի մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ, «Ճապարի» ՍՊԸ, «Ծանթ-Սեյրան» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և վերջիններիս մրցույթի հաղթող ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորների ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին թիվ 2 արձանագրությունը (որոշումը)՝ 6.1 և 6.2 կետերի մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ, «Ճաապարհ» ՍՊԸ, «Ծանթ-Սեյրան» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և վերջիններիս մրցույթի հաղթող ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան է ներկայացվել 21.07.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/7573/02/25 քաղաքացիական գործն, որը **<u>մակագրվել է</u>** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **<u>22.07.2025 թվականին</u>**, իսկ հասանելի է դարձել **<u>23.07.2025 թվականին</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **<u>գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները</u>**,

ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պետք է պահանջել թիվ «ԳՄՄՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/12» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ եթե հայցապահանջն իր բնույթով այնպիսին է, որ հայցադիմում ներկայացնելու պահին անհնար է որոշել հայցագնի չափը, ապա հայցվորը պարտավոր է վճարել օրենքով ոչ դրամական պահանջներով հայցադիմումների ներկայացման համար սահմանված պետական տուրքի չափը: Այս դեպքում դատարանը դատական ակտով անդրադառնում է գործի քննության ընթացքում որոշված հայցագնին համապատասխան լրացուցիչ պետական տուրք գանձելու հարցին:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է պետական տուրք գանձելու հարցին անդրադառնալ եզրափակիչ դատական ակտով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ-ի, «Ճապարի» ՍՊԸ-ի, «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին թիվ 2 արձանագրությունը (որոշումը)՝ 6.1 և 6.2 կետերի մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ, «Ճապարի» ՍՊԸ, «Շանթ-Սեյրան» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և վերջիններիս մրցույթի հաղթող ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն

ընդունել վարույթ:

2. ՀՀ վարչապետի աշխատակ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պահանջել դատարան ներկայացնել «ԳՄՄՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/12» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

4. Պետական տուրք գանձելու հարցին անդրադառնալ եզրափակիչ դատական ակտով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2025.07.25 10:15:33 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am